

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ԱՄԲԻՈՆԻ 2014-2015 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ամբիոնն ունի 14 աշխատակից, այդ թվում՝

- 1 բժշկ. գիտ. թեկն., դոցենտ
- 3 մանկ.գիտ. թեկն., դոցենտ
- 2 հոգեբ. գիտ. թեկն., դոցենտ
- 2 հոգեբ. գիտ. թեկն., ասիստենտ
- 1 ասիստենտ
- 4 դասախոս
- 1 գործավար

«Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին:

Հաշվետու 2014-2015 ուստարվա ժամանակահատվածում ամբիոնում ամբողջությամբ փոփոխվել և նոր ձևաչափով են ներկայացվել առարկայական ծրագրերը, ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/, որոնց մեջ տեղայնացվել են ժամանակակից գիտական տեսությունները և հայեցակարգերը: Դասախոսների որակավորման բարձրացման, կատարելագործման նպատակով կազմակերպվել են դասընթացներ, որոնք ուղղված են արդյունավետ ու որակյալ ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու վարմանը: Որակավորման բարձրացման նպատակով ստեղծվել է «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն», որի ղեկավար է նշանակվել ամբիոնի վարիչ՝ Վ. Բրուտյանը: Կենտրոնի գործառույթները իրականացվել են համաձայն կանոնակարգի և ընթացիկ աշխատանքային պլանի: 2014-2015 ուստարում, ըստ նախապես սահմանված գրաֆիկի, յուրաքանչյուր ամիս դասախոսները հանդես են եկել գիտական զեկույցներով, որից հետո կատարվել են քննարկումներ:

Հաշվետու ուստարում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել է 33 հոդված:

Ուսանողության շրջանում անցկացված դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցումների արդյունքում «Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնի միավորը կազմել է 4,69:

Հաշվետու ուստարում ամբիոնը մշակել, կազմել և ՈԻՄՎ հաստատման է ներկայացրել «Հոգեբանություն» մասնագիտության կրթական ծրագիրը: Գործընթացին ներգրավված են եղել դասախոսներ և համապատասխան մասնագետներ: Կրթական ծրագրի մշակման և կազմման համար կատարվել է առաջավոր փորձի ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ ՀՀ, արտասահմանյան, Ռուսաստանի Դաշնության տարբեր բուհերի կրթական ծրագրերի օրինակներից:

2014-2015 ուստարում ամբիոնում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ներկայացվել են առարկայական ծրագրեր /պորտֆոլիոներ/
- վերանայվել, թարմացվել և հաստատվել են ընթացիկ քննությունների, ընթացիկ ստուգումների, հանրագումարային քննությունների հարցաշարերը
- ներկայացվել է դասախոսի անհատական զարգացման պլանը
- քննարկվել և հաստատվել են կուրսային աշխատանքների թեմաները
- հաշվառվել են դասախոսների առարկայական մուտքերը՝ ընթացիկ քննություններից առաջ
- կատարվել են դասախոսների գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ
- կատարվել են դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից, ինչպես նաև փոխադարձ դասալսումներ դասախոսների կողմից
- ուսումնական և աշխատանքային պլանների քննարկում, վերանայում, անհատական ծանրաբեռնվածությունների կազմում, հաստատում:

Ամբիոնի գործունեությունը ճիշտ կազմակերպելու համար կազմվել են հետևյալ աշխատանքային գրաֆիկները.

- փոխադարձ դասալսումների գրաֆիկ
- դասալսումների գրաֆիկ
- ուսումնական խորհրդատուի հետ ուսանողների հանդիպման ժամանակացույց
- կուրսային աշխատանքների խորհրդատվության ժամանակացույց, հանդիպման գրաֆիկ
- դասախոսական կազմի զբաղվածության գրաֆիկ՝ փոխարինողների ցուցակով
- դասախոսական կազմի զբաղվածությաքն գրաֆիկ՝ այլ բաժիններում
- լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց
- ամբիոնի կադրային ներուժ /հաստիքներ, պաշտոններ, այլ տվյալներ/

2014-2015ուստարում ամբիոնը իրականացրել է մի շարք գիտաժողովներ և միջոցառումներ.

1. 2014թ. հոկտեմբերի 2-ին ամբիոնի վարիչ Վ.Բրուտյանը, ամբիոնի դասախոս Էդիտա Սիմոնյանը, նույն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները մասնակցել են Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցած Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը, այնուհետև մեր ուսանողները Վ.Բրուտյանի գլխավորությամբ գործնական ուսուցման նպատակով այցելել են նաև Վանաձորի մանկատուն, որտեղ մանկատան մանկավարժահոգեբանական աշխատակազմը նրանց ծանոթացրել է նախադպրոցական խմբի երեխաների հետ, ներկայացրել նրանց խնդիրները, իրավունքներն ու պարտականությունները:

2.2014-2015ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստեղծվեց «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն», որի ղեկավար նշանակվեց ամբիոնի վարիչ Վ.Բրուտյանը: Կենտրոնի նպատակն է աջակցել դասախոսներին՝ կարևորելով մասնաճյուղում դասավանդման և ուսումնառության արդյունավետ և ժամանակակից մեթոդների կիրառումը:

3.Ամբիոնը ուղղորդվելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-2015թթ.զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցով 2014թ. ղեկտեմբերին ներկայացրել է 2013-2014 ուսումնական տարում ռազմավարական ծրագրի կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին հաշվետվություն:

4. 2014թ. նոյեմբերի 22-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դահլիճում տեղի է ունեցել Հոգեբանի օրվան նվիրված գիտագործնական կոնֆերանս, որը կազմակերպվել էր Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից: Մասնաճյուղի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դասախոսները համապատասխան շնորհանդեսների ուղեկցությամբ ներկայացրել են գիտական զեկուցումներ:

5. 2014-2015թ. մայիսի 16-ին կայացել է «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» թեմայով միջբուհական հանրապետական գիտաժողովը, որը կազմակերպվել էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի և Երկրապահ կամավորականների միության համատեղ ջանքերով: Գիտաժողովի նյութերը տպագրվել են առանձին ժողովածուով:

Ուսումնական տարվա վերջում ամբիոնի վարիչի կողմից ամփոփվել են դասախոսի գնահատման վարկանիշային թերթիկների միավորները:

Դասախոսներին հանձնարարված է 2015թ. ամռան ամիսներին մշակել 2015-2016 ուստարվա ընթացքում դասավանդվող առարկաների առարկայական փաթեթները /պորտֆոլիոներ/:

Ամբիոնի վարիչ՝ Վ. Բրուտյան